«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՆՐԱՆՑ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հաստատություն՝ *Կապանի թիվ 5 ՆՈՒՀ*

Դաստիարակ՝ Հովհաննիսյան Սյուզաննա

Ղեկավար՝ *Ավետիսյան Ժաննա*

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5

1.1ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ.....5

1.2 ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՅԱՆՔԻՆ:ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵՐ.....6

1.3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ.....8

1.4 ԵՐԵԽԱՅԻ ՎԱՐՔԸ ԵՎ ՄՏԱՀՈՐԻԶՈՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....11

ԳԼՈՒԽ 2 ԸՆՏԱՆԻՔ – ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 12

2.1 ԸՆՏԱՆԻՔ – ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 5» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ 12

2.2 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԿՂԻԿ.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Մանկությունը մարդկային կյանքի կարևորագույն ժամանակաշրջանն է. ոչ թե ապագա կյանքի նախապատրաստություն, այլ իսկական, պայծառ, յուրօրինակ, անկրկնելի կյանքը: Եվ այն բանից, թե ինչպես է անցել այդ մանկությունը, ով է նրան ձեռքից բռնած տարել մանկական տարիներին, ինչ է ստացել նրա բանականությունն ու սիրտը շրջապատի աշխարհից, այդ ամենից է որոշակիորեն կախված, թե ինչպիս մարդ կդառնա այսօրվա մանուկը>>: Վ. Ա. Սուխոմլինսկի –
Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին: Եր: «Լույս», 1977, 317 էջ

Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է զարգացման իր անհատական տեմպով և ժամանակացույցով, սովորելու իր ուրույն ոճով և ընտանեկան մշակույթով: Երեխայի կրթադաստիարակչական գործընթացում առաջնային դեր ունի ընտանիքը, որի միջոցով երեխան սոցիալականացվում է, յուրացնում հիմնական սոցիալական գիտելիքները, ձեռք բերում բարոյական ունակություններ ու հմտություններ, ընկալում հասարակության մեջ ապրելու անհրաժեշտ արժեքները ընտանիքում: Ընտանիքն է ապահովում երեխայի հիմնական ֆիզիոլոգիական կարիքները, անվտանգության պահանջմունքները, սոցիալական և նյութական պաշտպանվածության, սիրո և հարգանքի կարիքները, սակայն մանկապարտեզ ընդունվելուն պես այդ պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք երեխայի հե հետ անցկացնում են նրա օրվա մեծ մասը: Համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքները, ուսումնական հաստատությունը, համայնքը համատեղ աշխատում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանն հասնելու համար:

Երեխայի դաստիարակությունն ու զարգացումն կոլեկտիվ աշխատանք է, որի արդյունավետությունը պայմանավորված է բոլոր դաստիարակող մեծահասակների համատեղ և փոխկապակցված ջանքերով:Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում: Ընտանիքն է սոցիալականացման առաջին օղակը, ուր դրվում է երեխայի սոցիալական զարգացման սկիզբը :Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր:Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: ըստ նախադպրոցական կրթության ոլորտը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի պահանջների՝

դաստիարակը պետք է համագործակցի սաների ծնողների կամ սմ նրանց օրինակ ական ներկայացուցիչների հետ :

Թեմայի արդիականությունը- Այս հետազոտական աշխատանքի արդիականությունը պ այմանավորված է նրանով, որ ընտանեկան դաստիարակության համակարգը փոփոխու թյուն է կրում, աղճատվում է ընտանիքի նկարագիրը և հետևաբար արդիական է դառնո ւմ ընտանիք-
մանկապարտեզ համագործակցության խնդիրը: Եվ զարգացած ու դաստիարակված հա սարակության հենքը կրթված և զարգացած սերունդ ունենալն է, որը հնարավոր է ծնող –
մանկապարտեզ համագործակցության միջոցով: Արդիական է նաև այնքանով, անով,որ ծնող-
մանկապարտեզ կապը կարող է ազդել մանկավարժական աշխատանքի արդյունավետո ւթյան վրա՝ միասնական ուժերով երեխաների մոտից արմատախիլ անել վատը և նրանց մեջ սերմանել դրականը:Նույն հետազոտության նպատակն է հիմնավորել ծնող – մանկապարտեզ կապի արդյունավետությունը, առանձնահատկությունները, առավելությունները սանի կրթության,դաստիարակության և զարգացման գործում:

Խնդիրները և մեթոդները - Որոշել մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի, ծնո ղի և սանի հետ համագործակցության և փոխգործակցության կազմակերպման հիմնակա ն ուղղությունները, բացահայտել և վերլուծել մանկավարժական կոլեկտիվի, սաների և ծնողների
համագործակցության աստիճանը՝ դաստիարակչական խնդիրների արդյունավետ լուծմ ան համար: Սահմանել այն մեթոդներն ու ձևերը,որը կնպաստի մանկավարժական աշխ ատանքի արդյունավետությանը, չափորոշչային վերջնարդյունքների իրականացմանը:

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Երեխան, ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր միջավայր, որտեղ նրա առաջին և հիմնական սյունը ընտանիքն է: Առաջինը տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Դաստիարակի աշխատանքի ազդեցությունը կախված է ծնողների փոխհարաբերությունից, ընտանիքի կյանքի ձևից: Երեխայի համար ընտանքիը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է և ծնողներն են պատասխանատու նրա հետագա ողջ կյանքի համար. երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարություն, ուշադրություն, քնքշանք, թույլերի նկատմամբ խղճահարություն ու օգնելու հիմքերը:

Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները՝ նախապատրասվում հետագա աշխատանքային գործունեությանը: Ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը: Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնտեսվարության, հաշվենկատության, անկախության և նույնիսկ երեխայի արագ աճին:

Ընտանիքի անդամները պետք է՝

- Ավելի շատ ժամանակ անցկացնեն՝ լսելով երեխաներին:

- Հարցնեն ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպե՞ս է անցնում օրը մանկապարտեզում:
- Նկատեն հիվանդությունը, էմոցիոնալ հուզական դաշտը, քաշի ավելացումը կամ կորուստը, խնամքի պակասը:
- Ծիծաղեն միասին: Պիտի թողնել, որ երեխան սովորեցնի ծնողին իր պես երեխա լինել, կատակել զվարճանալ իր նման :
- Պիտի հրաժարվել երեկոյան կարևոր ժամերը նվիրել արտաժամյա աշխատանքին:
- Օրը ճիշտ սկսել, լավ նախաճաշել, չմոռանալ հրաժեշտ տալ:
- Համբուրել երեխային, գրկել, սեղմել ձեռքը և ասել, որ սիրում եք:

1.2 ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՅԱՆՔԻՆ: ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵՐ

Ընտանիքի ներգրավումը նախակրթարանի կյանքին և նրանց ճիշտ համագործակցությամբ է պայմանավորված երեխայի անթերի զարգացումը: Այդ համագործակցությունից շահում է թե երեխան, թե ընտանիքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները համարվում են երեխայի համար առաջին ուսուցիչը և օրինակ ծառայողը: Այն մարդիկ, ովքեր շրջապատում են երեխային, պետք է հետևեն իրենց խոսքին և կատարած քայլերին, փոքրիկի հետ աշխատողը՝ մանկավարժը պարտավոր է ուսումնասիրել նրանց ընտանիքը: Դաստիարկը պետք է տա ընտանիքին տարբեր գաղափարներ և տեղեկություններ, որոնք կօգնեն երեխայի հետ հետագա շփմանը: Նա պետք է տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ճկուն, ստեղծագործ, բարեհամբույր, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի նիստուկացին ավելի է հեշտացնում համագործակցությունը:

Ծնողները կարող են ներգրավվել տարբեր նպատակներով: Օրինակ նյութական միջավայրի բարելավմանը միջոցառումների ու էքսկուրսիաների ժամանակ: Շփմանը նպաստում են նաև ծնողական հավաքները, սեմինարները:

Ընտանիք - մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների մոտ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար:

Երբ ընտանիքի անդամը մասնակցություն է ունենում մանկապարտեզի կյանքին, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Երեխայի մասին տեղեկության փոխանակումից շահում են թե՛ ծնողը, թե՛ մանկավարժը: Սա օգնում է

ծնողներին լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը և աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն: Ծնողին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքներին ներգրավելու համար պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերել: Ժողովներն ու հանդիպումները անցկացնել ծնողներին հարմար ժամերին, օրերին: Պահպանել սերտ կապ, զրուցել ընտանիքի անդամների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ: Հենվել երեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն, լինել համեմատաբար, պահպանել գաղտնիություն :

Ընտանիքին մանկապարտեզի գործունեությանը մասնակից դարձնելու համար կարելի է կիրառել բազում մեթոդներ, որոնք կօգնեն երեխային ինքնուրույն հասնել հաջողության:

- Շաբաթական կամ ամսական լրատուներ, տեղեկություն են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Ծնողական ժողովներ
- Առավոտյան հանդիպումներ
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին, երբ դաստիարակը ներկայացնում է այն գործողությունը, որը կատարվել է երեխայի հետ աշխատելիս
- Կլոր սեղան
- Զրույցներ՝ անհատական և խմբային
- Սպորտային միջոցառումներ

  Այցերն ընտանիքներ կարևոր տեղեկություն կարող են տալ երեխայի մասին և ամրապնդել փոխհաղորդակցումը: Դաստիարակը նախապես տեղեկացնում է իր այցելության նպատակի մասին: Տնային այցերը թույլ են տալիս իրագործել այն սկզբունքը՝ ըստ որի՝ կրթական ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է երեխան: Այդ ժամանակ կարելի է տունը նմանեցնել խմբասենյակին և կիրառել երեխայակենտրոն մոտեցում:

Դաստիարակը պետք է ունենա լավ տրամադրություն, մոռանա բողոքների մասին:

Բանավոր խոսքը նույնպես մեծ դեր ունի երեխայի համակողմանի զարգացման մեջ: Մանկավարժը երեխայի հետ շփվելիս պետք է խոսի հստակ և հատ - հատ: Արագախոսությունը երեխայի մոտ հետագայում առաջացնում է թոթովախոսություն:

1.3

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԵՐ ԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել,որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնությամբ

Էլբերտ Հաբարդ

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է: Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում: Այստեղ երեխան գտնվում է նոր միջավայրում, նոր աշխարհ՝ նոր կանոններով: Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը: Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցում նրա սոցիալական կապերը: Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնալ ավելի ինքնուրույն:

Մանկապարտեզի ընտրության ժամանակ ծնողները պարտադիր պետք է ուշադրություն դարձնեն՝

- Ինչպիսի՞ դաստիարակներ և օգնականներ են զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ:
- Ի՞նչ մեթոդներով են իրականացվում երեխայի զարգացման ծրագրերը:

- Արդյո՞ք երեխան սիրում է դաստիարակին և օգնականին: Հաճույքով է հաճախում թե՞ պարտադրված:
- Արդյո՞ք երեխան ճնշման չի ենթարկվում հասակակիցների և մեծահասակների կողմից:
- Որքանո՞վ են մանկապարտեզի պայմանները համապատասխանում սանիտարահիգիենիկ պահանջներին:
- Որքանո՞վ է մանկապարտեզը երեխայի զարգացման համար նպաստավոր միջավայր ապահովում:

Յուրաքանչյուր երեխա ունի իր զարգացման տեմպը և ոճը՝

- Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս:
- Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը և մտածողությունը:
- Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շոշափելով:

Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը:

Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ ու համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ երեխաները զգում են որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին: Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանկյունից:

Սոցիալական ազդեցություն . Մանկական հոգեբանների մեծ մասը միակարծիք են և պնդում են, որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման գործում:

Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Եթե նա տանը սովորում է առաջին պահանջով ստանալ այն, ինչ ուզում է, կամ իր ուզածին հասնում լացով ապա նոր միջավայրում նա ստիպված է հարմարվել և հաշվի առնել ուրիշի կարծիքը: Երեխայի էմոցիոնալ դաշտում տեղի է ունենում նոր փոփոխություններ: Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներին, ապա հիմա սկսվում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերներն իրական են:

Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, նշվում տարեդարձներ, կազ մակերպվում են էքսկուրսիաներ, այցելում են թանգարաններ, թատրոններ: Երեխան սո վորում է արձագանքել իրադարձություններին, սահմանվում է հստակ օրակարգ, փոքրի կը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում օրվա հստակ ժամերին:

Ճիշտ սահմանված օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիանալ զարգացման դրույթներից մեկն է: Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել, օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը, ինքնուրույն հանվել, հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարությունները կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը:

Հոգեբանական ազդեցություն. Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում նաև երեխայի հոգեկան զարգացման վրա: Մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

- Սոցիալական հմտությունները, նա սովորում է արդյունավետ հաղորդակցվելուրիշ անհատների հետ (ինչն էլ էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից) :
- Թիմում աշխատելու հմտություններ ձեռք է բերում նոր գաղափարներ, մոտեցումներ

- Ընդլայնում է աշխարհայացքը,

Մանկապարտեզ հաճախելն ունի նաև մի շարք առավելություններ.

- Կա հստակ սահմանված ռեժիմ: Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը, դայակը կամ տատիկը, տնային պայմաններում օրվա ռեժիմին հետևելը շատ ավելի բարդ է երբեմն նույնիսկ՝ անհնար:
- Երեխայի հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմը, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում:

Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ մանկապարտեզից հետո երեխաներն ավելի արագ ու հեշտ են հարմարվում դպրոցին: Այստեղ գլխավորը ոչ թե ձեռք բերած ուսումնական գիտելիքներն են (տառաճանաչություն կամ մաթեմատիկա) այլ կյանքի մի շարք հմտություններ, օրինակ ռեժիմին սովոր լինելը, ուշադրության կենտրոնացումը, խմբով աշխատելը, սոցիալական հմտությունները և այլն:

1.4 ԵՐԵԽԱՅԻ ՎԱՐՔԸ ԵՎ ՄՏԱՀՈՐԻԶՈՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկավոր է երեխայի համար ամեն օր կարդալ, սակայն ընթերցանությունը պետք է լինի դանդաղ, պարզ ու արտահայտիչ: Նրանք սիրում են ձեռք տալ գրքին, թերթել էջերը և զարմանալ նկարներով: Պետք չէ նրանց արգելել բարեկամանալ գրքի հետ: Պատմությունը ներկայացնելու համար պարտադիր չէ կարդալ գիրքը, կարելի է տարբեր ժեստերի միջոցով ցուցադրել գրքում զետեղված ստեղծագործությունը: Նախքան պատմվածքի ընթերցումը կարող եք ցույց տալ գրքի արտաքին տեսքը, նրա միջի պատկերները, այնուհետև սկսել ընթերցանությունը:

Ընթերցանության ժամանակ կարելի է նաև բեմադրել ընթերցանյութը խնդրելով երեխային նմանակել այս կամ այն հերոսին: Անպայման պետք է թույլ տալ որպեսզի երեխան էլ արտահայտի իրեն հուզող հարցերը:

Այս գործողություններն ավարտելուց հետո կարելի է պատրաստել սեփական գրքերը և այնտեղ տպագրել տարբեր պատմվածքներ, բանաստեղծություններ և այլն:

Միշտ էլ չափազանց շատ ու բազմաբնույթ են եղել մանկապարտեզի հույզերը, որոնք իրենց մեջ պարունակում են նյութական բազայի ստեղծումից մինչև երեխայի իրավունքների պաշտպանության և անհատականության զարգացման հարցեր:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ

- Հաճախակի զբոսնեք երեխայի հետ և զրուցեք ամեն ինչի մասին:
- Կազմակերպեք պարզ բառախաղեր: Թող երեխան թվարկի շարժվող և անշարժ առարկաներ:
- Խնդրեք նրան ուշադիր լսել շրջապատի ձայները, հետո տարբերել դրանք:
- Օգնեք երեխային երբ նա դժվարանում է ինչ – որ բան նկարելիս:
- Աշխատանքի ժամանակ օգտագործեք այն, ինչ–որ կա ձեռքի տակ՝ ամսագրեր, թերթեր, գործվածքներ, թելեր, պարաններ և այլն:
- Աշխատանքը գնահատելիս «Լավ է, գեղեցիկ է» ասելու փոխարեն, հստակ նկարագրեք այն ամենը ինչ տեսնում եք:
- Թույլ տվեք երեխային պատմել իր նկարածի մասին:
- Ցուցադրեք նրա կատարած աշխատանքը՝ այն փակցնելով պատին:

ԳԼՈՒԽ 2 ԸՆՏԱՆԻՔ – ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԸՆՏԱՆԻՔ - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 5» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Մանկապարտեզի գործունեության մեջ ընտանիքի ներգրավումը դարձել է շարունակական գործընթաց:

2-3 տարեկան խմբերն անվանում ենք «կրտսեր», խումբ, 3-4 տարեկանների խումբը՝ «միջին», իսկ 5-6 տարեկաններինը՝ «ավագ» խումբ: Բոլոր խմբերում ծնողը գործընկեր է: Համագործակցության նախապայմաններից գլխավորը խորհրդակցության ապահովումն է: Խմբասենյակները ընդարձակ են և հարմարավետ, ապահոված անհրաժեշտ գույքով: Ծնողին մանկապարտեզի կյանքին ներգրավելու կան բազմաթիվ ծրագրեր: Գտնվելով պարտեզի միջավայրում՝ նա

սկսում է ավելի լավ հասկանալ ծրագրերը, նկատել դժվարությունները, դիտարկել իր երեխայի վարքը: Ծնողների համար հաճախակի կազմակերպում ենք տարբեր սեմինար–պարապմունքներ:

Առավոտյան ընդունելությունից հետո երեխայով զբաղվում են դաստիարակները և օգնականը: Ծնողները մանկապարտեզի անցուդարձին մասնակցում են ժողովների, միջոցառումների ժամանակ: ժողովները անցկացվում են դահլիճում, որտեղ լինում են միայն մանկավարժական խորհուրդը և ծնողները:

Ժողովները հիմնականում տևում են մեկից երկու ժամ: Միջոցառումներից առաջ դիմում ենք ծնողներին, որպեսզի օգնեն միջոցառման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար: Ծնողները իրենց ձեռքով պատրաստում են անհրաժեշտ պարագաներ, անհրաժեշտության դեպքում ապահովում տարբեր հագուստներով: Մեր միջոցառումները համեմված են լինում ազգային երգ-երաժշտությամբ:

Ծեսերի ժամանակ ևս կարևորում է մանկապարտեզ ընտանիք համագործակցությունը, քանի որ ներգրավվում ենք նաև ծնողներին:

Պատրաստում ենք ծիսական տիկնիկներ և երգում ծիսական երգեր: Ծնողները իրենց հետ բերում են անհրաժեշտ պարագաներ, հյուսում գեղեցիկ կոմպոզիցիաներ:Ընտանիք - մանկապարտեզ համագործակցության արդյունքում ստեղծվում են կանաչ տարածքներ, տնկում ենք ծառեր, բազմերանգ ծաղիկներ: Երեխաներն էլ մեր կյանքի ծաղիկներն են: Մենք էլ նրանց պետք է պարարտացնենք բազում կարողություններով հմտություններով, որ վայելենք:

Ուսումնասիրելով «Կապանի թիվ 5» մանկապարտեզի փորձը՝ առանձնացրել եմ մի քանի կարևոր կետ՝ ընտանիքին մանկապարտեզի կյանքին ներգրավվելու համար

- Ընտանիքը պետք է դառնա մանկապարտեզի գործընկերը
- Ընտանիքը որպես փորձագետ պետք է օգնի մանկապարտեզին զարգացնել և կատարելագործել ծրագիրը
- Ընտանիքը պետք է ընդունի մանկապարտեզի մանկավարժական մոտեցումները և սկզբունքները
- Ծնողների կարողությունը դիտարկի որպես ռեսուրս և օգտագործի ի շահ մանկապարտեզի

- Ծնողներին պետք է ներգրավի մանկապարտեզի ամենօրյա կյանքին՝ ներառելով նրանց տարբեր աշխատանքներում

Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, ապա դա ավելի է մոտեցնում մանկապարտեզի և ընտանիքի կապը:

Միջոցառումները տալիս են հետևյալ արդյունքները.

- Ծնողների ոգևորություն
- Համախմբվածություն
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի անդամների միջև
- Ծնողների վստահության բարձրացում
- Երեխաների լավ վարք

Այն մանկապարտեզներում, որտեղ կարևորվում է ընտանիք–մանկապարտեզ համագործակցությունը, երեխաներն ավելի ազատ են, ինքնավստահ, հանգիստ և երջանիկ: Բոլոր տեսակի գործունեության հարաբերությունները ընթանում են կողմերի հավատարմության, փոխադարձ գոհունակության և հարգանքի վրա: Դա արտացոլվում է երեխայի դեմքին և արարքների մեջ:

2.2 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԿՂԻԿ

Ժողովները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում: Դրանք հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ արծարծել սովորական աշխատանքային ժամերին: Ժողովները վարելիս մանկավարժը պետք է ձգտի օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, ցանկալի հյուր զգան, քանի որ պարտեզը «մանկավարժի տարածքն» է: Շփման ժամանակ օգտագործվում է ոչ նեղ մասնագիտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են օգնել իրենց երեխային:

Ծնողական ընդհանուր ժողովները կազմակերպվում են տարին երեք անգամ: Դրանք իրականացվում են հիմնականում մանկավարժական խորհրդի և տնօրենի գլխավորությամբ, քննարկվում են խնդիրներ կապված նոր ուսումնական տարվա աշխատանքների ամփոփման հետ կապված: Զրուցում ենք մանկապարտեզի մշակութային կյանքի և այլ իրադարձությունների շուրջ խմբի դաստիարակը զեկուցում է խմբի ընդհանուր կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին: Խոսքով հանդես են գալիս նաև ծնողները:

Առաջարկությունների արկղիկը հիմնականում ամրացվում է մանկապարտեզի միջանցքների պատերին, հիմք հանդիսանալով նրան, որ ծնողներն արտահայտեն իրենց մտահոգությունները երեխաների հետ կապված այս կամ այն խնդրի շուրջ: Ծնողը պետք չէ իր թերթի վրա նշի իր երեխայի անունը: Արկղը բացվում է ժողովների ժամանակ և քննարկվում դրա մեջ հավաքված հարցերը: Լինում են նաև բարեմաղթանքներ, որոնք մանկավարժն ընթերցում է:

Խորհուրդներ ծնողներին աշխարհի ականավոր մարդկանցից.

- Դաստիարակե՛ք երեխային ձեր իսկ անթերի օրինակով:
- Ձանացեք երեխայի աչքերում մնալ բարձունքում, նրանք թող չտեսնեն ձեր թերություններն ու թուլությունները:
- Ուշադիր եղե՛ք ձեր ասած բառերին երեխայի հետ խոսելիս:

Ժան Ժակ Ռուսո

- Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել, դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների:

Օնորե դը Բալզակ

Մենք դաստիարակում ենք երեխային յուրաքանչյուր պահի, նույնիսկ այն ժամանակ, երբ ուղակի նայում ենք նրան: Երեխայի դաստիարակումն ավելի դյուրին է քան վերադաստիրակումը: Երեխաները մեր կյանքի ապագա քաղաքացիներն են:

Երեխաները պետք է մեծանան՝ որպես հիանալի քաղաքացիներ: Ճիշտ դաստիարակումը մեր ապագա հաջողության գրավականն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և ար-դյունավետ լինի բոլոր կողմերի համար: Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ:

Երբ ծնողներն իրենք են սահմանում երեխայի մոտ որևէ կոնկրետ կարողություն դաստիարակելու կամ սվորեցնելու խնդիրները և դրանք լուծելու քայլերը՝ կանոնները, ավելի պատրաստակամ և հետևողական են այդ կանոնները պահպանելու և մանկավարժի հետ այդ ուղղությամբ համագործակցելու հարցում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ծնողներին գործնական աշխատանքների միջոցով ներգրավել իրենց երեխաների կրթական խնդիրների սահմանման և այդ խնդիրները լուծելուն միտված գործողությունների մշակման աշխատանքներին. Այսպիսով, սաների դաստիարակությունը, ուսուցմումը և զարգացումը լիարժեք կարելի է իրականացնել այն դեպքում,երբ ծնողի և մանկավարժական աշխատողների նպատակները և գործողությունները համընկնում են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իգնել Ս., Ձոնս Ժ., «Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը».
2. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս. «Մանկավարժություն», Երևան 2005թ.
3. Մակարենկո Ա.Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ» 1940թ.
4. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2010թ.
5. **Осипова Л.Е. «Работа детского сада с семей» Москва 2008г.**
6. **Спок Б «Ребенок и уход за ним».**
7. Դաստիարակների բլոգներ:
8. «Նախաշավիղ» ամսագիր: